

*Որոշ նկատառումներ Հայաստանի Հանրապետությունում խաղաղ
հավաքների իրավունքի վերաբերյալ*

Մեեր Մամաջանյան

Ռուս-հայկական (Սլավոնական)

պետական համալսարանի ասպիրանտ

Խաղաղ հավաքների իրավունքը մարդու հիմնարար սահմանադրական իրավունքներից է: Քաղաքացիական հասարակությունում և իրավական պետությունում այն մարդու սահմանադրաիրավական կարգավիճակի անբաժանելի և հիմնարար տարրերից մեկն է: Խաղաղ հավաքների իրավունքը նաև մարդու մի շարք այլ իրավունքների և ազատությունների գործնականում իրականացման էական պայմաններից մեկն է: Հավաքների իրավունքի իրականացումն արտահայտվելու ազատության, միավորվելու իրավունքի, պետության գործերի կառավարմանը մասնակցելու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման կարևոր երաշխիքն է:

Խաղաղ հավաքների իրավունքը պետք է ապահովվի սահմանադրական երաշխիքներով: Սահմանադրությունը նվազագույնը պետք է պարունակի հավաքների ազատությունը երաշխավորող իրավունք:

Խաղաղ հավաքների իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29 հոդվածում, համաձայն որի *«Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»:*

Խաղաղ հավաքների իրավունքն ամրագրված է նաև մարդու իրավունքներին վերաբերվող գրեթե բոլոր հեղինակավոր միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ 1948թ. ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածում, 1950թ. ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 11-րդ հոդվածում, 1966թ. ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 21-րդ հոդվածում, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 15-րդ հոդվածում:

Որպես հիմնարար իրավունք՝ խաղաղ հավաքների իրավունքն այնքանով որքանով հնարավոր է, պետք է իրականացվի առանց կարգավորման: Այն, ինչը հստակորեն չի արգելվում օրենքով, պետք է ենթադրվի որպես թույլատրելի, և նրանք, ովքեր ցանկանում են հավաքվել, չպետք է թույլտվություն պահանջեն այդ անելու

համար¹: *Այսինքն՝ հոգուտ հավաքների ազատության կանխավարկածը պետք է հստակորեն սահմանվի օրենքով*: Շատ երկրների օրենսդրություններում այն սահմանվում է սահմանադրական երաշխիքների ձևով, բայց կարող է ամրագրվել նաև կոնկրետ հավաքները կարգավորող օրենքով:

Հայաստանի Հանրապետությունում 2004թ. ապրիլի 28-ին ընդունվեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը: Օրենքի ընդունմամբ վերջ դրվեց ավտորիտար երկրներին բնորոշ հավաքների անցկացման թույլատրման եղանակին և սահմանվեց իրազեկման եղանակը: Այսպես՝ օրենքի 5-րդ հոդվածով կարգավորվում են հրապարակային միջոցառման կազմակերպումը և անցկացումը, որի էությունից հետևում է, որ կազմակերպիչը տեղական ինքնակառավարման մարմիններից ոչ թե թույլտվություն է խնդրում, այլ պարզապես իրազեկում է իր մտադրությունների մասին:

«Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) մի քանի անգամ ծավալուն փոփոխություններ և լրացումներ են կատարվել: Նշված օրենսդրական փոփոխությունների ու լրացումների մի մասն առավելապես ուղղված էին օրենքի թերությունների և բացթողումների վերացմանը, օրենսդրական կարգավորման կատարելագործմանը, ումանք էլ՝ հետընթաց էին և օրենքը մոտեցրեցին հավաքների իրավունքի կարգավորման խորհրդային մոդելին:

Օրենքի ներկա խմբագրության մեջ այսօր էլ նկատվում են որոշ նորմեր, որոնք չհիմնավորված խոչընդոտներ են ստեղծում խաղաղ հավաքների սահմանադրական իրավունքի գործնականում իրականացման համար:

1. Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված է. *«մինչև զանգվածային հրապարակային միջոցառման սկիզբը կազմակերպչի փոխարինելու դեպքում կազմակերպիչը ոչ ուշ, քան հրապարակային միջոցառումը սկսվելուց երեք ժամ առաջ, պետք է գրավոր տեղեկացնի լիազորված մարմնին կամ նրա ներկայացուցչին՝ կցելով նոր կազմակերպչի համար սույն օրենքով նախատեսվող տվյալները»*: Խաղաղ հավաքների իրավունքի հետ կապված ցանկացած օրենսդրական կարգավորման նպատակը հավաքների իրավունքի գործնականում իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է, որի մասին վկայում է նաև Օրենքի 1-ին հոդվածը: Ցանկացած օրենսդրական կարգավորում պետք է միտված լինի տվյալ իրավունքի իրացմանն աջակցելուն և դրա պաշտպանության ապահովմանը: Այս առումով շատ կարևոր է, որ օրենքը խուսափի կարգավորիչ հավելյալ, բյուրոկրատական համակարգի ստեղծումից, որն արհեստական սահմանափակումներ կստեղծի խաղաղ հավաքների իրավունքի գործնականում իրացման համար: Օրինակ՝ Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը կարծես միտված է խոչընդոտելու խաղաղ հավաքների իրավունքի գործնականում իրականացմանը: Կարիք չկա ժամանակային սահմանափակումներ նախատեսել կազմակերպչին փոխարինելու համար: Քանի դեռ կա որևէ անձ, որը

¹ Руководящие принципы по свободе мирных собраний. Варшава 2007. Ст.31

պատրաստ է իր վրա վերցնել հավաքի անցկացման համար պատասխանատվությունը, հավաքը պետք է կայանա:

2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում ամրագրված է. «Մինչև 18 տարեկան այն քաղաքացիները, ովքեր օրենքով սահմանված կարգով չեն ճանաչվել լրիվ գործունակ, իրավունք ունեն զանգվածային հրապարակային միջոցառումներ կազմակերպել միայն ծնողների կամ օրինական այլ ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ»: Երեխաները նույնպես ունեն իրենց պահանջները և շահերը և դրանք ներկայացնելու կարիք: Խաղաղ հավաքների ազատությունը երեխաների համար նույնպես ապահովում է իրենց տեսակետներն արտահայտելու և հասարակական կյանքում իրենց ներդրումն ունենալու հնարավորություն: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 15-րդ հոդվածը պահանջում է ճանաչել երեխաների խաղաղ հավաքներ կազմակերպելու և դրանց մասնակցելու իրավունքը:

3. Լուրջ մտահոգություն են առաջացնում 9-րդ հոդվածում սահմանված բլանկետային սահմանափակումները:

Առաջին. 9-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է. «Արգելվում է հրապարակային միջոցառումների անցկացումը գորամասերի, պաշտպանական նշանակության օբյեկտների, քրեակատարողական հիմնարկների, նախնական կալանքի վայրերի տարածքներից 150 մետրից պակաս հեռավորության վրա»: Կարծում ենք, որ նման սահմանափակումը չի համապատասխանում իրավական պետության կարևորագույն սկզբունքներից մեկին՝ համաչափության սկզբունքին և իրավունքի սահմանափակման ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության չափանիշին²: Նման հաստատությունները, որպես կանոն, պաշտպանված են պատերով, պատնեշներով և այլ պաշտպանողական նշանակություն ունեցող շինություններով, որոնք բավականին հեռու են պաշտպանվող օբյեկտներից: Ուստի՝ նման օրենսդրական սահմանափակումը համաչափ չէ հետապնդվող նպատակին և որոշ դեպքերում կարող է անիմաստ դարձնել անցկացվող հավաքը: Պետք է գիտակցել, որ ցանկացած հավաք տեղի է ունենում կոնկրետ նպատակով և անհրաժեշտ է նպաստել, որ հավաքը տեղի ունենա թիրախ լսարանի տեսանելիության և լսելիության գոտում:

Երկրորդ. 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում նշվում է. «Հանրապետության նախագահի նստավայրից, Հայաստանի աստուային էլեկտրակայան ՓԳԸ-ից, գազի ստորգետնյա պահեստարաններից և դրանց սպասարկման կառույցներից, Օրբիտա 2 վերգետնյա արբանյակային կայանից այնպիսի հեռավորության վրա, որը ուստիկանությունն անհրաժեշտ կհամարի՝ անվտանգության նկատառումներով»: Նորից հարց է առաջանում՝ արդյո՞ք նման սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: Հավաքները տեղի են ունենում կոնկրետ

² Խաղաղ հավաքների իրավունքը, կարող է սահմանափակվել և այդ սահմանափակումը համատեղելի կլինի ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի հետ եթե՝

1. սահմանափակումը նախատեսված է օրենքով, 2. սահմանափակումը հետապնդում է ՀՀ սահմանադրությամբ և կոնվենցիայով նախատեսված որևէ իրավաչափ նպատակ, 3. սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

նպատակով. ցուցարարները, հնարավոր է ցանկանան հավաքվել Նախագահի նստավայրի մոտ, և հավաքը չափազանց հեռու տարածության վրա անցկացնելու դեպքում կդառնա անիմաստ՝ չգտնվելով թիրախ լսարանի տեսանելիության և լսելիության գոտում: Նաև Օրենքի այս դրույթը հայեցողության չափազանց մեծ շրջանակ է տրամադրում ՀՀ ոստիկանությանը խաղաղ հավաքների իրավունքն իրականացնելու նկատմամբ սահմանափակումներ նախատեսելու հարցում: Այսպես՝ ինչպես նշեցինք, Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հավաքը կարող է տեղի ունենալ Հանրապետության նախագահի նստավայրից, Հայաստանի ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ից, գազի ստորգետնյա պահեստարաններից և դրանց սպասարկման կառույցներից, Օրբիտա 2 վերգետնյա արբանյակային կայանից այնպիսի **հեռավորության վրա, որը ոստիկանությունն անհրաժեշտ կհամարի անվտանգության նկատառումներով**: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի և Կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն այդ սահմանափակումը (հեռավորությունը) պետք է սահմանվի օրենքով: Եթե նույնիսկ ընդունենք, որ սահմանափակումը նախատեսված է օրենքով, ապա պետական մարմին այնպիսի լայն և նույնիսկ անսահմանափակ հայեցողության հնարավորություն է ընձեռված, որ պետական մարմնի որոշումները դառնում են անկանխատեսելի, ուստի այդպիսի օրենքը չի կարող երաշխավորել նվազագույն պաշտպանություն կամայականությունից, որը, մեր կարծիքով, օրենքի այս դրույթը զրկում է որոշակիությունից: Իսկ համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշման՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նույնպես բազմիցս նշել է, որ օրենքով նախատեսված լինելու պահանջը նշանակում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքին միջամտությունը պետք է ոչ միայն ուղղակի սահմանված լինի օրենքով, այլ նաև որոշակի պահանջներ ներկայացնի սահմանափակող օրենքի որակին: Օրենքը պետք է պատշաճ կերպով մատչելի լինի քաղաքացու համար, համապատասխան հանգամանքներում հնարավորություն ընձեռի քաղաքացուն կողմնորոշվելու, թե անհրաժեշտության դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվելու, բացի այդ օրենքի ցանկացած սահմանափակող նորմ պետք է ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որպեսզի քաղաքացին հնարավորություն ունենա կանխատեսել այն հնարավոր հետևանքները, որոնք կարող են առաջանալ որոշակի հանգամանքներում³: Այսինքն՝ Եվրոպական դատարանը պահանջում է, որ ներպետական օրենքը շահագրգիռ անձանց համար իր որակով լինի մատչելի և հետևանքներով կանխատեսելի: Իհարկե, դատարանն ընդունում է, որ օրենքները հնարավոր չէ բացարձակ ճշգրտությամբ ձևակերպել, սակայն եթե օրենքը մատչելիության և կանխատեսելիության առումով այնքան անկատար է, որ չի նախատեսում նվազագույն պաշտպանություն կամայականությունից, ապա նման օրենքի հիման վրա կատարված սահմանափակումը չի կարող համապատասխանել օրենքով նախատեսված լինելու պահանջին:

³ Sunday Times v. United Kingdom, Judgment of 26 April 1979

Երրորդ. 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում նշվում է. «*Եթե առկա են հավաստի տվյալներ, որ միջոցառման անցկացումն ստեղծում է բռնության անմիջական սպառնալիք կամ իրական վտանգ է սպառնում պետական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարոյականությանը, անձանց կյանքին և առողջությանը, այլոց սահմանադրական իրավունքներին ու ազատություններին կամ անցկացվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ռասայական, ազգային, կրոնական ասելություն բորբոքելու, բռնության, պատերազմ քարոզելու նպատակով կամ կարող է հանգեցնել զանգվածային անկարգությունների կամ էական գույքային վնաս հասցնել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:*

Այդ տվյալները կարող են համարվել հավաստի, եթե դրանց առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացրել են պաշտոնական հիմնավորված եզրակացություն: Նույն կարգով այդ մարմինները եզրակացություն են տալիս այդ հիմքերի վերացման մասին»:

Առաջին հայացքից թվում է, որ այս օրենսդրական կարգավորումը բխում է ՀՀ Սահմանադրությունից և նախատեսում է այն բոլոր իրավաչափ նպատակները, որոնց առկայության դեպքում հավաքների ազատության սահմանափակումը հնարավոր է: Սակայն անխուսափելիորեն առաջանում են նաև մի շարք հարցեր.

1. Ի՞նչ է իրենցից ներկայացնում «հավաստի տվյալներ» արտահայտությունը:

2. Այդ հավաստի տվյալները պարունակող պաշտոնական հիմնավորված եզրակացությունները ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացնում են սեփական նախաձեռնությամբ, թե լիազոր մարմնի նախաձեռնությամբ, դրանք պետք է ներկայացվեն ցանկացած դեպքում, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ չափորոշիչներով պետք է առաջնորդվի լիազոր մարմինը՝ մեկ դեպքում պահանջելով այդ պաշտոնական հիմնավորված եզրակացությունը, իսկ մեկ այլ դեպքերում՝ չպահանջելով, թե լիազոր մարմինը պարտավոր է բոլոր դեպքերում պահանջել պաշտոնական հիմնավորված եզրակացություն:

3. Պաշտոնական հիմնավորված եզրակացություններն ինչ բնույթի իրավական փաստաթղթեր են՝ գաղտնի, թե ոչ, հավաքի կազմակերպիչը կարող է ծանոթանալ դրանց բովանդակությանը, թե ոչ, արդյոք նրանք կարող են բողոքարկել այդ փաստաթուղթը, թե ոչ, եթե այո, ապա ինչ ընթացակարգով:

Վերոնշյալ օրենսդրական կարգավորման վերաբերյալ իրենց մտահոգություն են հայտնել նաև «Ժողովրդավարություն օրենքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողովը) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հավաքների ազատության հարցերով փորձագիտական խորհուրդը: Նրանց եզրակացությունում Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում տեղ գտած ձևակերպումները որակվել են որպես «ոչ հստակ»:

Չորրորդ. 9-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է. «*Հրապարակային միջոցառումներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու իրավունք չունեն՝ 1) ոստիկանության,*

ազգային անվտանգության մարմինների ծառայողները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի. 2) զինծառայողները, քրեակատարողական ծառայողները:»

Ըստ Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ խաղաղ հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու իրավունք չունեն նաև քրեակատարողական ծառայողները: Այնինչ ՀՀ Սահմանադրության 29 հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով: *Ինչպես պարզ է դառնում, քրեակատարողական ծառայողների խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակումը նախատեսված չէ ՀՀ Սահմանադրությամբ:*

4. Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասում ասվում է. *«Իրազեկումների քննարկման ընթացակարգը սահմանում է լիազոր մարմինը, սակայն կազմակերպչին պետք է լիարժեք իրավունք վերապահվի ներկայացնելու իր տեսակետը: Յուրաքանչյուր իրազեկման քննարկման մասնակցողները ելույթ ունենալու, հարցեր տալու, հարցերին պատասխանելու, առարկություններ կամ միջնորդություններ կատարելու, լրացուցիչ փաստաթղթեր, եզրակացություններ կամ այլ տեղեկատվություն ներկայացնելու իրավունք ունեն: Իրազեկման քննարկումը չի կարող մեկ ժամից ավել տևել»:* Իրազեկման քննարկման տևողությունը մեկ ժամով սահմանափակող Օրենքի այս դրույթը որոշ հանգամանքներում կարող է անիրական, երևակայական դարձնել Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված կազմակերպչի ընթացակարգային իրավունքները: Չէ որ իրազեկման քննարկման հիմնական նպատակը կազմակերպչի և լիազոր մարմնի միջև ծագած խնդիրների լուծումն է, որը կարող է նվազեցնել հասարակական կարգի հնարավոր խախտումները, նպաստել կազմակերպչի և իշխանությունների միջև ոչ թե առճակատման, այլ համագործակցության հաստատմանը, որը կապահովի խաղաղ հավաքի անցկացումը: Մեր կարծիքով նման ժամանակային խիստ սահմանափակումն իրավաչափ չէ և անհրաժեշտ է կամ այդ ժամանակային սահմանափակումն ընդանրապես վերացնել կամ գոնե այդ ժամանակահատվածն ավելացնել այնքան, որ այդ ժամանակային սահմանափակումն արհեստական խոչընդոտ չհանդիսանա կազմակերպչի համար՝ իր ընթացակարգային իրավունքները գործնականում իրականացնելու համար:

5. Օրենքը չի նախատեսում զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելու համար թույլտվություն ստանալու ուղղակի պահանջ, սակայն որոշ դեպքերում, կարծես, դա բխում է օրենքի որոշ նորմերի բովանդակությունից, օրինակ՝ Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն *«Ոստիկանության ներկայացուցիչն իրավունք ունի հրապարակային միջոցառման դադարեցման մասին որոշում ընդունելու... միայն հետևյալ դեպքերում. եթե*

1) զանգվածային հրապարակային միջոցառումն անցկացվում է առանց իրազեկման»

կամ Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. *«Ոստիկանությունը հրապարակային միջոցառումը հարկադիր դադարեցնելու իրավունք ունի միայն հետևյալ դեպքերում, եթե*

1. դադարեցնելու մասին սույն հոդվածով նախատեսված կարգով տրված պահանջը կազմակերպչի կողմից մասնակիցներին անհապաղ չի հայտարարվել»:

Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է. հավաքին՝ լինի այն օրինական, թե ապօրինի, արձագանքելու հիմնական չափանիշը նրա խաղաղ կամ ոչ խաղաղ բնույթն է: Հավաքները համարվում են խաղաղ, եթե կազմակերպիչներն ունեն խաղաղ մտադրություններ⁴: Խաղաղ տերմինը պետք է մեկնաբանվի որպես մի վարքագիծ, որը կարող է բարկացնել կամ վիրավորել այն անձանց, որոնք ընդդիմանում են հավաքի կողմից ներկայացվող գաղափարներին և պահանջներին⁵ և նույնիսկ այնպիսի վարքագիծ, որը միտումնավոր խոչընդոտում կամ խանգարում է երրորդ անձանց գործունեությանը⁶: Եթե խաղաղ լինելու հիմնարար չափանիշը պահպանվում է, ապա այն պետական իշխանությունների մոտ առաջացնում է դրական պարտականություն, որը բխում է խաղաղ հավաքների իրավունքից:

Այն հավաքները, որոնք համարվում են ոչ խաղաղ, ոչ օրինական են՝ վերահաս բռնության համոզիչ և անհայտ վտանգի պատճառով: Այնուամենայնիվ՝ խաղաղ հավաքները հնարավոր է լինեն ոչ օրինական, օրինակ՝ 1. հավաքը չի համապատասխանել օրենսդրությամբ սահմանված պարտադիր նախապայմաններին (կազմակերպիչների կողմից չի պահպանվել նախապես իրազեկելու պահանջը), 2. բովանդակային առումով այն հետապնդում է ոչ օրինական նպատակ:

Եթե կազմակերպիչները խախտել են օրենքը, սակայն հավաքն անցնում է խաղաղ, ապա ոստիկանությունը չպետք է միջամտի հավաքի անցկացմանը (հարկադիր դադարեցնի այն), այլ պետք է նպաստի, որպեսզի հավաքն անցնի խաղաղ, իսկ հավաքից հետո անհրաժեշտության դեպքում կազմակերպիչներին ենթարկի պատասխանատվության: Եթե խաղաղ հավաքը վերածվում է ոչ խաղաղի, օրինակ՝ դրսևորվում է ոչ օրինական արարքի մտադրություն, ապա հավաքը կարող է համարժեք ձևով դադարեցվել, այդ թվում՝ նաև հարկադրաբար: Սակայն հավաքի ժամանակ առանձին անձանց ոչ օրինական հայտարարությունները, գործողությունները խաղաղ հավաքն ինքնաբերաբար չեն դարձնում ոչ խաղաղ, և ոստիկանությունը միջամտելիս պետք է ձեռքալայի առանձին անձանց, այլ ոչ թե ցրի հավաքը⁷: Այսպիսով՝ քանի դեռ հավաքը խաղաղ է, այն պետք է կայանա և չպետք է ցրվի ոստիկանության կողմից, *իսկ ուժ կիրառելու անհրաժեշտության դեպքում ոստիկանությունը պետք է կիրառի այն միայն ծայրահեղ դեպքերում, և ուժի կիրառումը պետք է լինի համաչափ:*

⁴ Cisse v. France, Judgment of 26 April 2002

⁵ Plattform "Arzte fur das Leben" v. Austria, Judgment of 26 April 1988

⁶ Руководящие принципы по свободе мирных собраний. Варшава 2007. Ст.31

⁷ Руководящие принципы по свободе мирных собраний. Варшава 2007. Ст.70

6. ՀՀ Սահմանադրության 29 հոդվածի 2-րդ մասում ամրագրված է. *«Ձինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով»:*

Այսպիսով՝ Սահմանադրությունը և Կոնվենցիան օրենսդրությանը հնարավորություն են ընձեռում պետական համակարգի որոշակի ներկայացուցիչների համար օրինական սահմանափակումներ նախատեսել: ՀՀ մի շարք օրենքներ սահմանափակումներ են պարունակում պետական իշխանության որոշակի ներկայացուցիչների համար⁸, սակայն դրանք ոչ թե սահմանափակում են այդ անձանց խաղաղ հավաքների իրավունքը, այլ ուղղակիորեն զրկում են այդ իրավունքի իրականացման հնարավորությունից:

Հարց է առաջանում, արդյոք ՀՀ Սահմանադրության 29 հոդվածի 2-րդ մասում նախատեսված սահմանափակման հնարավորությունը նշանակում է, որ օրենսդիրը բացարձակ հայեցողություն ունի որոշելու այդ սահմանափակման ծավալները և գործնականում հնարավորություն ունի զրկելու պետական իշխանության որոշակի ներկայացուցիչների՝ իրենց սահմանադրորեն երաշխավորված հիմնարար իրավունքից:

Մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սահմանափակման հնարավորությունը չի նշանակում, որ օրենսդիրը բոլոր դեպքերում պետք է սահմանափակի այդ պետական իշխանության ներկայացուցիչների խաղաղ հավաքների իրավունքը: ՀՀ Սահմանադրությունում օգտագործվում է հետևյալ ձևակերպումը՝ *«իրականացման սահմանափակումներ»*, իսկ մեկ այլ դեպքում, օրինակ՝ ՀՀ սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մասում՝ *«ընտրել և ընտրվել չեն կարող»* ձևակերպումը: Եթե սահմանադիրը նպատակ ունենար զրկել պետական իշխանության որոշ ներկայացուցիչների խաղաղ հավաքների իրավունքից ընդհանրապես, չէր օգտագործի *«իրականացման սահմանափակումներ»* ձևակերպումը, այլ կօգտագործեր, օրինակ, *«խաղաղ հավաքներ չեն կարող իրականացնել...»* ձևակերպումը: Հետևաբար, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պետական իշխանության *որոշ ներկայացուցիչների խաղաղ հավաքների սահմանափակումները*, որոնք փաստացի զրկում են նրանց այդ իրավունքից, չեն բխում ՀՀ Սահմանադրության տեքստից և արդարացված չեն: Ցանկացած նման սահմանափակում պետք է հետապնդի հետևյալ նպատակը, որ իշխանության այդ ներկայացուցիչներն իրենց պաշտոնական պարտականությունները պատշաճ կատարեն, և պահպանվի նրանց չեզոքության նկատմամբ հասարակության

⁸ Օրինակ՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի դատախազի նկատմամբ կիրառվող սահմանափակումներ վերտառությամբ 43-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետում նշվում է, որ դատախազն իրավունք չունի 4) կազմակերպելու գործադուլներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցելու դրանց: Նմանատիպ սահմանափակումներ են պարունակում նաև ՀՀ մի շարք այլ օրենքներ՝ կապված պետական համակարգի որոշակի ներկայացուցիչների կողմից խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակման հետ:

վստահությունը: Մակայն այդ նախատեսված սահմանափակումները չպետք է հանգեցնեն կարծիք ունենալու և արտահայտվելու ազատության անհարկի սահմանափակումների: Խաղաղ հավաքների իրավունքը պետական իշխանության վերոնշված ներկայացուցիչների համար նույնպես ապահովում է իրենց տեսակետներն արտահայտելու, հասարակական կյանքում իրենց ներդրումն ունենալու, սեփական իրավունքները պաշտպանելու և հնարավոր խախտումների մասին բարձրաձայնելու հանարավորություն:

Այսպիսով՝ խաղաղ հավաքների իրավունքը պետք է սահմանափակվի միայն, եթե այդ սահմանափակման պատճառները կապված են այդ պաշտոնատար անձանց պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարման, նրանց չեզոքության հետ: Այստեղ չեզոքության սահմանումն առանցքային է: Մնացած բոլոր դեպքերում այդ պաշտոնատար անձինք նույնպես պետք է ունենան խաղաղ հավաքների իրավունքից օգտվելու հնարավորություն: